Ա. Պ. ՉԵԽՈՎ

ՓԱԽՍՏԱԿԱՆԸ

ՊԵՏՀՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1937

1312

[illegible] + 24

[illegible]

28.VII 30.VII 47

Ա. Պ. ՉԵԽՈՎ

ՓԱԽՍՏԱԿԱՆԸ

ԹԱՐԳՄ.
ՎԱՉԳԵՆ ՏԱԼՅԱՆԻ

Նկարներ
Ա. ԴԱՎԻԴՈՎԱՅԻ

Հ 24352 13+2

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

А. П. Чехов

БЕГЛЕЦ

Госиздат, Ереван, 1937

Այդ մի յերկար արարողություն եր։ Սկզբում Պաշկան անձրեվի տակ քայլում եր մոր հետ մերթ հնձած դաշտերով, մերթ անտառի կածաններով, վորտեղ դեղնած տերեվները կպչում եյին նրա կոշիկներին, այնքան քայլեց, մինչև լուսացավ։ Հետո նա մի յերկու ժամ կանգնեց մութ միջանցքում և սպասեց, մինչև վոր դուռը բաց անեն։ Միջանցքում այնքան ցուրտ ու խոնավ չեր, վորքան դուրսը, բայց յերբ քամին փչում եր, անձրևի կաթիլներն այնտեղ ել եյին հասնում։ Յերբ միջանցքը կամաց-կամաց լցվեց ժարդկանցով, նրանց արանքում սեղմված Պաշկայի յերեսը դեմ առավ ինչ-վոր մեկի մուշտակին, վորից աղած ձկան ուժեղ հոտ եր փչում, և Պաշկան ննջեց։ Բայց, ահա, փականը չխկաց, դուռը

կրնկի վրա բացվեց, և Պաշկան մոր հետ մտավ ընդունարան։ Այստեղ էլ ստիպված յեղան յերկար սպասել։ Բոլոր հիվանդները լուռ ու անշարժ նստած էին նստարաններին։ Պաշկան դիտում եր նրանց և նույնպես լուռ եր, չնայած շատ սարսափելի ու ծիծաղելի բաներ եր տեսնում։ Մի անգամ միայն, յերբ մի վոտի վրա թռչկոտելով ընդունարան մտավ մի ինչ-վոր ջահել տղա, Պաշկան ինքն էլ ուզեց այդպես թռչկոտել։ Նա բրթեց մոր արմունկը, թևքի մեջ փռբթկաց ու ասաց.

—Մայրիկ, տես՝ ճնճղուկ։

—Սուս արա, բալաս, սուս արա,—ասաց մայրը։

Փոքրիկ լուսամուտում յերևաց գլուխը կուշտ քնած բուժակը։

—Մոտեցեք ցուցակագրվելու,—բամբ ձայնով ասաց նա։

Բոլորը, նրանց թվում և ծիծաղելի թռչկոտող ջահելը, ուղղվեցին դեպի փոքրիկ լուսամուտը։ Բուժակն ամեն մեկին հարցնում եր անունը, հայրանունը, տարիքը, բնակավայրը, վաղուց ե, արդյոք, հիվանդ, և այլն։ Իր մոր պատասխաններից Պաշկան

...—Մայրիկ, տես՝ ճնճղուկ!

իմացավ, որ իր անունը վոչ թե Պաշկա յե՛ այլ Պավել Գալակտիոնով, որ ինքը յոթ տարեկան է, անգրագետ և հիվանդ է զատկից սկսած։

Գրվելուց հետո պետք յեղավ կարճ ժամանակով վոտքի կանգնել, վորովհետև ընդունարանով անցավ բժիշկը՝ սպիտակ գոգնոցը հագին և յերեսսրբիչը գոտկի պես մեջքին կապած։ Թռչկոտող Չահելի մոտով անցնելիս նա ուսերը վեր քաշեց և ծոր տալով ասաց.

—Ա՜յ քեզ հիմար։ Ի՞նչ, բա հիմար չե՞ս։ Ցես քեզ կարգադրել եմ, յերկուշաբթի որը, իսկ դու ուրբաթ որն ես յեկել։ Ինձ վոր մնա՝ իսկի յել մի գա, բայց, հիմարի գլուխ, ախր վոտդ կփչանա։

Չահելի դեմքն այնպիսի խղճալի արտահայտություն ստացավ, վոր կարծես ուզում եր վողորմություն խնդրել։ Նա աչքերը ճպճպացրեց ու ասաց։

—Մի բարություն արեք, Իվան Միկոլայիչ։

—Եվ ի՞նչ Իվան Միկոլայիչ,—հեգնեց բժիշկը։ Ասել եմ յերկուշաբթի, ուրեմն պիտի լսել։ Հիմար ես, ուրիշ վոչինչ...

Ընդունելությունն սկսվեց։ Բժիշկն իր սենյակում նստած՝ հերթով կանչում եր հիվանդներին։ Բժշկի սենյակից հաճախ լսվում եյին սուր ճիչեր, յերեխայի լաց կամ բժշկի զայրացկոտ բացականչություններ։

—Դե, ինչ ես ճվում։ Մորթում եմ քեզ, ինչ ե։ Հանգիստ նստիր։

Պաշկայի հերթը հասավ։

—Պավել Գալակտիոնով,—կանչեց բժիշկը։

Մայրը քարացավ, կարծես այդ կանչին չեր սպասում։ Նա բռնեց Պաշկայի ձեռքից և տարավ փոքրիկ սենյակը։

Բժիշկը նստած եր սեղանի մոտ և փոքրիկ մուրճով մեքենայորեն խփում եր հաստ գրքին։

—Ի՞նչն ե ցավում,—հարցրեց նա, առանց ներս մտնողներին նայելու։

—Տղան արմունկի ցավունի, տե՛ր բժիշկ,—պատասխանեց մայրը, և նրա դեմքն այնպիսի արտահայտություն ստացավ, վոր կարծես իսկապես չափազանց տխրել եր Պաշկայի ցավի համար։

—Շորերը հանիր։

Պաշկան փնչալով արձակեց վզի թաշկինակը, հետո թևքով սրբեց քիթը և առանց

տապելու սկսեց հանել փոքրիկ մուշտակը։

—Ա՛յ կնիկ, հո հյուր չեմ յեկել,—բարկացած ասաց բժիշկը։—Ինչ ես ձգձգում։ Մենակ հո դու չե՛ս։

—Պաշկան մուշտակն շտապով գետին գցեց և մոր ոգնությամբ շապիկը հանեց։ Բժիշկը ծուլորեն նայեց նրան և չփչփացրեց նրա մերկ փորին։

—Պաշկա՛, շատ մեծ փոր ունես, ախպեր,—ասաց բժիշկը և հառաչեց։—Դե՛, ցույց տուր արմունկդ։

Պաշկան խեթ-խեթ նայեց արնախառն կեղտաջրով լի թասին, բժշկի գոգնոցին ու լաց յեղավ։

—Մե՛...ե՛—ծաղրեց բժիշկը։ Սրան տես, նշանելու տղա յե ու զռռում է։ Ամո՛թ քեզ։

Աշխատելով լացը զսպել, Պաշկան նայեց մորը և նրա այդ հայացքում մի խնդիր եր գրված։

«Դու էլ տանը չպատմես, թե յես հիվանդանոցում լաց յեղա»։

Բժիշկը տնտղեց նրա արմունկը, սեղմեց, հառաչեց, շրթունքները չփչփացրեց, հետո նորից սեղմեց։

—Քեզ ծեծել է հարկավոր, ա՛յ կնիկ, բայց ծեծող չկա։ Ինչո՞ւ սրան ավելի շուտ

չեյիր բերում։ Ձի վոր ձեռքը փչացած-պըր-ծած է։ Անխելք, մի տես ե՞, հոդն է ցա-վում ախր։

—Դուք ավելի լավ կգիտենաք, տե՛ր բժիշկ...—հառաչեց կինը։

—Տե՛ր բժիշկ... Տղայի ձեռքը փչացրել ես ու հիմա, թե՝ տե՛ր բժիշկ։ Առանց ձեռքի սա ի՞նչ աշխատող կլինի։ Մինչև կյանքիդ վերջը սրան դայակություն պիտի անես։ Քո քթին վոր մի պզուկ դուրս գա, յերևի ան-միջապես հիվանդանոց կվազես, իսկ տղային կես տարի փտեցրել ես։ Դուք բոլորդ եք այդպես։

Բժիշկը գլանակը վառեց։ Մինչ գլանակը մխում եր, նա նախատում եր կնոջը և մտքում յերգած յերգի չափով գլուխը տըմ-բացնում ու յերկար մտածում ինչ-վոր բա-նի մասին։ Մերկ Պաշկան նրա առջև կանգ-նած լսում եր ու ծխին նայում։ Յերբ գլա-նակը հանգավ, բժիշկն սթափվեց ու սկսեց խոսել մի քիչ ցածր։

—Դե լսիր, այ կնիկ։ Սպեղանիներով ու կաթիլներով ցավին դարման չես անի։ Հար-կավոր է տղային թողնել հիվանդանոցում։

—Թե վոր պետք է, ինչու չե, կթողնեմ, տե՛ր բժիշկ։

—Դե, դու մնա, Պաշկա, ասաց բժիշկը, թփթփացնելով Պաշկայի ուսին։

—Մենք նրան կվիրահատենք։ Դե, դու մնա, Պաշկա,—ասաց բժիշկը, թփթփացնելով Պաշկայի ուսին։—Թող մայրդ գնա, իսկ յես ու դու, ախպերս, կմնանք այստեղ։ Ինձ մոտ, ախպերս, շատ լավ է. լավ քեֆ կքաշենք։ Դու տես, թե յես ու դու ինչքա՞ր պիտի ա-նենք, սարյակ վորսալու կգնանք, յես քեզ աղվես ցույց կտամ։ Միասին հյուր կգնանք... Հ՞ը, ուզո՞ւմ ես։ Իսկ մայրդ վաղը կգա քո յետևից, հ՞ը։

Պաշկան հարցական նայեց մոր յերեսին։

—Մնա՞ բալաս,—ասաց մայրը։

—Մնո՞ւմ է, մնո՞ւմ,—ուրախ բացականչեց բժիշկը։—Ել յերկար-բարակ խոսելու կարիք ել չկա։ Յես նրան կենդանի աղվես ցույց կտամ, միասին կգնանք տոնավաճառ պաղշաբար գնելու... Մարիա Դենիսովնա, սրան վերև տարեք։

Բժիշկն ըստ յերևույթին զվարթ ու մեղմաբարո մարդ ել և նրան ընկերակցելը հաճելի կլիներ։ Պաշկան ուզեց հարցել բժշկին, մանավանդ, վոր յերբեք տոնավաճառում չեր յեղել, մեծ սիրով ել կենդանի աղվեսին կնայեր, բայց առանց մորն ինչպես մնար։ Մի քիչ մտածելուց հետո նա

վորոշեց խնդրել բժշկին, վոր մորն էլ թողնի հիվանդանոցում, բայց բերանը դեռ չեր բացել, վոր բուժակուհին նրան սանդուղքով արդեն վերև եր տանում։ Գնում եր Պաշկան և բերանը բաց նայում եր չորս կողմը։ Սանդուղքը, հատակն ու շեղակները՝ բոլորը ներկված եյին հիանալի դեղին ներկով և ձեթի անուշ հոտ եյին արձակում։ Ամենուրեք կախված եյին լամպեր, ձգված եյին նեղ ու յերկար գորգեր, պատերից դուրս եյին ցցված պղնձե ծորակներ։ Բայց Պաշկային ամենից շատ դուր յեկավ այն մահճակալն ու մոխրագույն անողորկ վերմակը, վորի վրա նստեցրին նրան։ Նա ձեռք տվեց բարձերին ու վերմակին, դիտեց հիվանդների սենյակը և վորոշեց, վոր բժիշկը վատ չի ապրում։

Հիվանդների սենյակը մեծ չեր, այնտեղ յերեք մահճակալ կար միայն։ Մի մահճակալն ազատ եր, մյուսը Պաշկան եր զբաղեցրել, իսկ յերրորդի վրա նստած եր թբթված աչքերով ինչ-վոր մի ծերուկ, վորն անընդհատ հազում եր ու թքում գավաթի մեջ։ Դուռը բաց եր և Պաշկան իր մահճակալի վրայից տեսնում եր մյուս սենյակի մի մասը՝ յերկու մահճակալով, վորոնցից մե-

կի վրա քնած եր ինչ-որ շատ գունատ, նիհար մի մարդ՝ գլխին ռետինե բուշտ դրած, իսկ մյուսի վրա, ձեռքերն իրարից հեռու դրած, նստած եր փաթաթած գլխով մի գեղջուկ, որը շատ նման եր կնոջ։

Պաշկային նստեցնելով, բուժակուհին դուրս գնաց և մի քիչ հետո վերադարձավ հագուստի մի կույտ գրկած։

— Ես քեզ,— ասաց նա,— հագիր։

Պաշկան հանվեց և հաճույքով սկսեց ըզգեստավորվել։ Հագնելով շապիկը, վարտիքը և ժոխրագույն խալաթը, նա ինքնագոհ դիտեց իրեն և մտածեց, որ այդպիսի զգեստով վատ չեր լինի մի անգամ անցնել գյուղով։ Նրա յերևակայությանը պատկերանում եր, թե ինչպես մայրն իրեն ուղարկում է գետափի բանջարանոցը գոճու համար կաղամբի տերևներ քաղելու։ Նա գնում է, իսկ տղաներն ու աղջիկները շրջապատել են իրեն ու նախանձով նայում են նրա խալաթին։

Սենյակը մտավ հիվանդապահ կինը, ձեռքին՝ յերկու փայտե ման, գդալներ և յերկու կտոր հաց։ Մի մանը նա դրեց ծերուկի առաջ, իսկ մյուսը՝ Պաշկայի։

— Կեր,— ասաց նա։

—Կեր,—ասաց նա։

Նայելով ամանի մեջ՝ Պաշկան տեսավ յուղալի կաղամբե ապուր՝ մեջը մի կտոր միս։ Նա նորից մտածեց, վոր բժիշկն իսկի էլ վատ չի ապրում, և վոր նա այնքան էլ բարկացկոտ չէ, ինչպես սկզբում յերևաց։ Պաշկան յերկար ժամանակ կերավ ապուրը, ամեն կումից հետո լիզելով գդալը։ Հետո, յերբ ամանում բացի մսից ուրիշ բան չմնաց, խեթ-խեթ նայեց ծերուկին և նախանձեց, վոր նա դեռ ուտում է։ Պաշկան հառաչեց և սկսեց միսն ուտել, աշխատելով վորքան կարելի յե յերկար ժամանակ ուտել, բայց նրա ջանքերը վոչ մի արդյունք չտվին. շուտով միսն էլ չքացավ։ Մնաց միայն մի կտոր հաց։ Հացն առանց կերակրի անհամ եր, բայց ինչ արած։ Պաշկան մտածեց և հացն էլ կերավ։ Այդ ժամանակ ներս մտավ հիվանդապահը՝ նոր քրեղաններով։ Այս անգամ ամանների մեջ տապակած միս եր, հետն էլ կարտոֆիլ։

— Բա հացդ ո՞ւր է,— հարցրեց հիվանդապահը։

Պատասխանի փոխարեն Պաշկան թշերն ուռցրեց և ոդ դուրս փչեց։

— Սխալ ինչի՞ խժռեցիր,— կշտամբեց հի-

վանդապահը. բա տապակածն ինչով պիտի ուտես։

Նա դուրս գնաց ու հացի մի նոր կտոր բերեց։

Պաշկան յերբեք տապակած միս չեր կերել և այս անգամ փորձելով տեսավ, որ շատ համեղ է։ Տապակածը շուտ չքացավ և հացի ավելի մեծ կտոր մնաց, քան թեապուրից հետո։ Ծերուկը ճաշեց պրծավ և մնացած հացը պահեց փոքրիկ սեղանի արկղի մեջ։ Պաշկան ել նույնն եր ուզում անել, բայց հետո միտքը փոխեց և իր հացի կտորը կերավ։ Կերավ, կշտացավ ու գնաց զբոսնելու։

Հարևան սենյակում, բացի Նրանցից, որոնց նա տեսել եր բաց դռնից, չորս մարդ ել կար։ Նրանցից միայն մեկը գրավեց Պաշկայի ուշադրությունը։ Դա բարձրահասակ, մազոտ ու մռայլ դեմքով, չափազանց նիհար մի գյուղացի յեր։ Նա նստած եր մահճակալին և ճոճանակի պես անընդհատ տրմբացնում եր գլուխն ու շարժում աջ ձեռքը։ Պաշկան յերկար ժամանակ աչքը չեր հեռացնում Նրանից։ Գյուղացու ճոճանակաձև համաչափ շարժումները Պաշկային սկզբում

տարորինակ, մյուսներին զվարճացնելու համար կատարվող բան էին թվում. բայց յերբ նա մոտիկից նայեց նրա դեմքին, սարսափեց ու հասկացավ, որ այդ գյուղացին ծանր հիվանդ է։

Անցնելով յերրորդ սենյակը, նա տեսավ յերկու գյուղացու, որոնց մուգ կարմիր դեմքերը վոնց որ կավաշաղախ լինեին։ Նրանք անշարժ նստած էին մահճակալներին և իրենց դեմքերով, որոնց վրա դրժվար եր ջոկել դիմագծերը, հեթանոսական փոքրիկ կուռքերի էին նման։

— Մորքուր, սրանք ինչի՞ յեն եսպես, —հարցրեց Պաշկան հիվանդապահին։

— Նրանք ծաղիկով հիվանդ են, փոքրիկ։

Վերադառնալով իր սենյակը, Պաշկան նստեց մահճակալին և սկսեց սպասել բժշկին, որ նրա հետ սարյակ վորսալու կամ տոնավաճառ գնա։ Բայց բժիշկը չկար։ Հարևան սենյակի դռան մեջ յերևաց բուժակը։ Նա կռացավ գլխին սառցով լիքը տոպրակ դրած հիվանդի վրա և բացականչեց.

— Միխայլո։

Քնած Միխայլոն չշարժվեց։ Բուժակը ձեռքը թափ տվեց ու գնաց։ Բժշկին սպա-

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

սելու ժամանակ Պաշկան ուշադրությամբ դիտում եր իր հարևան ծերուկին։ Ծերուկն անդադար հազում եր ու թքում գավաթի մեջ։ Նրա հազը յերկարաձիգ եր ու ճռռ-ճռռան։ Ծերուկի մի առանձնահատկությունը Պաշկային դուր յեկավ։ Յերբ նա հազալիս ոդը ներս եր քաշում, նրա կրծքում ինչ-վոր բան սուլում եր ու տարբեր ձայներով յերգում։

— Պապի՛, եդ ի՞նչն ե շվշվացնում,— հարցրեց Պաշկան։

Ծերուկը վոչինչ չասաց։ Պաշկան մի քիչ սպասեց ու հարցրեց.

— Պապի՛, աղվեսը վո՞րտեղ ե։

— Ի՞նչ աղվես։

— Կենդանի աղվես։

— Ել վո՞րտեղ պիտի լինի, անտառում։

Շատ ժամանակ անցավ, բայց բժիշկը դեռ չեր յերևում։ Հիվանդապահը թեյ բերեց և Պաշկային կշտամբեց, վոր թեյի համար հաց չի թողել։ Բուժակը մի անգամ ել յեկավ և աշխատեց ձեն տալ Միխայլոյին։

Մթնեց։ Սենյակներում ճրագները վառեցին, իսկ բժիշկը չկար ու չկար։ Շուկա գնալու կամ սարյակներ վորսալու համար արդեն ուշ եր։ Պաշկան ձգվեց անկողնի վրա և սկսեց մտածել։ Նա հիշեց բժշկի խոստա-

ցած պաղշաքարը, մոր դեմքն ու ձայնը, իրենց խրճիթի մթությունը, վառարանը, փնթփնթացող Յեգորովնա տատին... և հանկարծ տխրեց ու թախիծ զգաց։ Յերը հիշեց, որ վաղը մայրը գալու յե իր յետևից, ժըպտաց և աչքերը փակեց։

Նրան զարթեցրեց խշխշոցը։ Հարևան սենյակում ինչ-որ մեկը քայլում եր ու շշուկով խոսում։ Գիշերային ճրագների ու կանթեղների նվազ լույսի տակ Միխայլոյի մահճակալի մոտ յերեք կերպարանք եյին շարժվում։

— Մահճակալով տանենք, թե ենպես,— հարցրեց նրանցից մեկը։

— Ենպես, մահճակալը դռներից չի անցնի։ Եհ... իր ժամանակին չմեռավ, աստված հոգին լուսավորի։

Մեկը բռնեց Միխայլոյի ուսերից, մյուսը՝ վոտներից ու բարձրացրին։ Միխայլոյի թևերն ու խալաթի փեշերը թույլ կախվեցին ոդում։ Յերրորդը, կնոջ նման գյուղացին, խաչակընքեց ու յերեքն ել վոտներով անկարգ թիկթիկացնելով ու Միխայլոյի փեշերը կոխոտելով, դուրս գնացին սենյակից։

Քնած ծերուկի կրծքից լսվում եր սուլոցն ու բազմաձայն յերգը։ Պաշկան լսեց,

նայեց մութ լուսամուտներին և սարսափահար վեր թռավ տեղից։

— Մայրիկ... հաստ ձայնով հառաչեց նա և առանց պատասխանի սպասելու, իրեն նետեց մյուս սենյակը։ Կանթեղն ու գիշերային ճրագը հազիվ էին լուսավորում խավարը։

Միխայլոյի մահով անհանգստացած, գըզգզված մազերով հիվանդները նստել էին իրենց մահճակալներին ու միախառնվելով ստվերներին, ավելի լայն ու բարձրահասակ էին յերևում և թվում եր, թե քանի գնում մեծանում էին։ Վերջին մահճակալին, ուր ավելի մութն եր, նստած եր գյուղացին և շարժում եր ձեռքն ու գլուխը։

Առանց դռների մեջ տարբերություն դնելու, Պաշկան նետվեց ծաղկով հիվանդների սենյակը, այնտեղից՝ միջանցք, միջանցքից ներս ընկավ մի մեծ սենյակ, վորտեղ մահճակալներին նստած ու պառկած էին հրեշներ՝ յերկար մազերով ու պառավի դեմքերով։ Վազելով անցավ կանացի բաժինը և նորից ընկավ միջանցք. նա տեսավ ծանոթ սանդուղքի ճաղերը և ցած վազեց։ Նա ճանաչեց ընդունարանը, վորտեղ առավոտը նստած եր և սկսեց փնտռել դրսի դուռը։

Գաշկան լսեց, նայեց մութ լուսամուտներին...

Դռան փականը չփակաց, սառը քամին փչեց և Պաշկան սայթաքելով դուրս վազեց բակը։ Նրան միայն մի միտք եր զբաղեցնում՝ փախչել ու փախչել։ Ճանապարհը չգիտեր, բայց հավատացած եր, որ յեթե վազի, անպայման կհասնի տուն, մոր մոտ։ Գիշերն ամպամած եր, բայց ամպերի տակից լույս եր տալիս լուսինը։ Դրսի սանդուղքից Պաշկան առաջ վազեց, պտտվեց սրահի շուրջը և դեմ առավ խիտ թփերին։ Մի քիչ կանգ առավ, մտածեց ու յետ վազեց դեպի հիվանդանոցը, պտտվեց նրա չորս կողմը և նորից կանգնեց անորոշ դրության մեջ։ Հիվանդանոցից այն կողմ սպիտակին եյին տալիս գերեզմանների խաչերը։

— Մայրիկ... ճչաց նա ու յետ փախավ։

Մութ ու խոժոռ շենքերի մոտով անցնելիս, նա մի լուսավորված պատուհան տեսավ։ Վառ կարմիր բիծը խավարում սարսափելի յեր թվում, բայց վախից խելքը կորցրած Պաշկան, չիմանալով ուր փախչել, յետ դարձավ դեպի այդ բիծը։ Լուսամուտի կողքին աստիճաններով մի պատշգամբ ու մի շքեղ դուռ կար՝ վրան սպիտակ ու փոքր մի տախտակ։ Պաշկան սանդուղքով վեր վազեց և լուսամուտից ներս նայեց։ Մի անսահման

ուրախություն համակեց նրան։ Լուսամուտից նա տեսավ ուրախ, մեղմաբարո բժշկին, վորը սեղանի մոտ նստած գիրք եր կարդում։ Յերջանկությունից ծիծաղելով, Պաշկան թևերը տարածեց դեպի ծանոթ դեմքը և ուզեց աղաղակել, բայց մի անհայտ ուժ արգելեց նրա շնչառությունը, զարկեց վոտներին։ Նա ճոճվեց ու անզգա ընկավ սանդուղքին։

Յերբ նա ուշքի յեկավ, արդեն լույս եր և շատ ծանոթ մի ձայն, վորը յերեկ տոնավաճառ գնալ, սարյակ ու աղվես եր խոստանում, ասում եր նրան.

— Այ թե հիմարն ես, Պաշկա։ Հիմար չես բա։ Այ թե ծեծելու տեղ ունես...

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Թարգմանեց՝ Վ. Տալյան
Խմբագրեց՝ Հ. Հայրապետյան
Սրբագրիչ՝ Ե. Այվազյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Գլավլիտի լիազոր Կ. 4573
Հրատ. № 4102, տիրաժ 3000, պատվեր № 813
Հանձնվել է արտադրության 1937 թ. հոկտեմբերի 15-ին
Ստորագրվել է տպագրության 1937 թ. նոյեմբ. 11-ին

Գնահատակ 2-րդ տպարան [illegible] 11

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0002011

ԳԻՆԸ 75 կ.

084.

A II 24352

А. П ЧЕХОВ

БЕГЛЕЦ

Гиз АРМ. ССР ЕРЕВАН